

# ՀՆՉԱԿ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



## ՀՆՉԱԿԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

### ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ԵՆՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ՀՆՉԱԿԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

1 Անհուն ուրախութեամբ կը հաղորդենք հայ հասարակութեան, թէ Հին և Վերակազմեալ Հնչակեան երկու հասուածներուն մէջ միութեան բոլոր պայմաններուն վրայ վերջնական համաձայնութիւն գոյացած ըլլալով՝ միութիւնը կատարուած է.

Միացեալ ու միակ Հնչակեան կուսակցութեան նոր կեդրոնական վարչութիւնը պիտի կազմուի անյապաղ, ամբողջ կուսակցութեան բուէով:

\* \*

Երկար բանակցութիւններէ, բուն ու վճռական ձեռքերէ վերջ, փոխադարձ զեջումներով ու զոհողութիւններով ձեռք բերուած այս առաջին յաջողութիւնը՝ ոչ միայն կը սրտապնդէ մեզ այն կազդուրիչ հաստատումով, թէ Հնչակեան բոլոր հին ու նոր ընկերները կեղբայրանան, կը համախըմբուին դարձեալ ու առ յաւէտ, իրենց միակ պաշտելի դրօշակին տակ, այլ նաև իրաւունք կուտայ մեզ հաւատարմութիւնէ ինչ որ ալ ըլլան թիւօրիմացութիւնները, անձուկ մտահոգութիւնները, անգիտակից ատելութիւններն ու դժբաղդ, արմատացած ու ծացումները՝ ուշ կամ կանուխ կարելի պիտի ըլլայ իրագործել հայ յեղափոխական ամբողջական եղբայրութիւնը:

Հնչակեան կուսակցութիւնը՝ ինք եր մէջ միացած՝ պիտի շարունակէ սակայն պահել հայ յեղափոխական մնացած անջատ ու ժերուն միատարր ձուլումին հեռապնդելու և զայն ամեն կերպով զիւրացնելու իր բովանդակ անվերապահ կամաւորութիւնը: Ու միևնոյն ատեն, աւելի քան երբէք, անվհատ յամառութեամբ, պիտի ձգտի ամբողջ հայ ժողո-

վուրդին փրկարար համերաշխութիւնն իրականացնել՝ հայ յեղափոխական գործին շուրջը:

2 Նախ քան Միութեան կայանալը՝ Հին Հնչակեան կուսակցութեան Երրորդ Պատգամաւորական ժողովը, գումարուած Լճիգծնում, իւր օրակարգի բոլոր հարցերին լուծում ապուրց և նախկին կեդրոնից եռամեայ գործունէութեան նիւթական և բարոյական հաշիւները ստանալուց և վաւերացնելուց յետոյ՝ ընտրեց կուսակցութեան՝ Նոր Աեդրոն:

3 Պատգամ. ժողովը, բացի դրանից, ընտրեց նաև Գործադիր Յանձնախումբ անուան տակ միւսարմին՝ պաշտօն տալով նրան տանելու կուսակցութեան ընթացիկ գործերը, մինչև նորընտիր կեդրոնի անդամները տեղ հասնելը: Գործադիր Յանձնախումբը պաշտօնի վրայ է արդէն, սկսած իւր ընտրութեան օրից:

4 Հնչակեան կուսակցութեան երկու հասուածների մէջ միութիւնը կայացած լինելով՝ Հին Հնչակեան նորընտիր Աեդրոնի անդամները, համաձայն Պատգամ. ժողովի նախօրօք տուած որոշման, միանալով Վերակազմեալ Հնչակեանների ընդհ. Պատգամ. ժողովի կսղմից ներկայացուելիք հաւասար թուով և նոյն պաշտօնի համար ընտրուելիք անձնաւորութեանց հետ՝ կկազմեն Միացեալ Հնչակեան կուսակցութեան միակ Աեդրոնական Վարչութիւնը:

## Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Միութիւնը կայացաւ:  
Հնչակեան կուսակցութեան երկու հասուածները, որոնք 96 թուականի դժբաղդ բաժանումից յետոյ շարունակուած էին գործել ինքնուրոյնաբար, անջատաբար, այսօր ձեռք են կարկառում միմեանց,

միանում են միմեանց հետ որպէս մի և անանջատ մարմին, միասին, միակամ և միախորհուրդ մղելու համար Հայրենիքի ազատութեան կռիւը թշնամու դէմ:

Իրողութեան մեծութեան ու բոսքի հանդիսաւորութեան առաջ և զգացած սրտի անհուն բերկրութեան տակ մենք միանգամից մոռանում ենք այդ չարաբաստիկ թուականի չարաղէտ դէպքերը, որոնք Հայկական Յեղափոխութեան պատմութեան տխուր էջերը պիտի կազմեն և հարկէ: Մենք մի անգամից պոկում արմատից, դէն ենք ձգում ամեն ոխ, ատելութիւն, անձնական հաշիւ և քինախնդրութիւն, որոնք, որպէս բնական հետեւանք այդ տխուր իրողութիւններին՝ կարող էին ծածկուած մնալ մեր սրտերի ծալքերում, հակառակ այն երկար ժամանակին, որ սահեցաւ անցաւ նրանց վրայով: Աւ մղուած մի գաղափարով, տողորուած միև նոյն զգացումներով, աչքերնիս յառած ապագայի յաղթանակի վերայ, մենք անկեղծօրէն, առանց որևէ յետին մտքի, պիտի սեղմուանք միմեանց ձեռքերը և զիրկնդիսուն համբուրում միմիանց հետ:

Անցեալը, ահ, այդ մի անակնկալ, յանկարծական մրրիկ էր, որ բարձրացաւ յեղափոխական մրթնորտի մէջ, ցրուելով, բաժանելով մէկմէկուց մինչև այդ ժամանակ Հայրենիքի կռիւը միասին տարած, խոնաւ ու մութ բանտերում միասին տառապած և կախազանի արհաւիրքների տակից միասին անցած ընկերներին: Բայց այդ մրրիկը անցաւ, և այսօր միմեանց կորցրած, միմեանցից զատուած այդ ընկերները որպիսի թռիչքով, որպիսի յափշտակութեամբ նորից գտնում են միմեանց, նորից ձանաչում են միմեանց և նորոգում իրենց սկզբնական ուխտը միև նոյն ուժով, միևնոյն կորովով, միևնոյն անձնուիրութեամբ և միևնոյն դրօշի տակ, սեղմ շարքերով, կողք կողքի կանգնած, կռուելու հասարակաց թըշնամու դէմ:

Այն բոլորը՝ որ եղաւ, այն բոլորը՝ որ կատարուեցաւ, ողբալի է, անտարակոյս, բայց նա անխուսափելի դարձաւ: Մեր նպատակից, դիտաւորութիւնից և բոսքի պահանջից բոլորովին դուրս է քննել, վերլուծել այդ դէպքերը և բացատրել նրանց մէջ կեցած ձախտազրական կապը, դուրս բերել ժամանակի առաջնորդող մտքերը, գաղափարները, որոնք շարժառիթ եղան նրանց, վերջապէս պարզել, դնել անձնաւորութիւնների կատարած դերերը: Այդ բոլորը, վերջ ի վերջոյ, պատմութեան է վերաբերում և կարող է նիւթ մատակարարել առանձին ուսումնասիրութեան: Իսկ մենք՝ որ կենդանի գործը ունինք դրուած մեր առաջ իւր բազմատեսակ պահանջներով ու բարդութիւններով, մենք՝ որ մի բոսք մտքով իսկ չենք անցնում այդ տխուր իր-

ողութիւնների պատճառով դէնքը ձեռքից բաց թողնել, պատառել մի կողմ շարաւել ազատութեան անունով պարզած յեղափոխական դրօշակը, թողնել թշնամուն արեան հեղեղով ողորուած երկիրը անպատիժ ու անպատկառ ոտնատակ տալ, — մենք այդ բոլորի վերայից անցնելով, որպէս թէ դրանք եղած չլինէին, որպէս թէ ոչինչ պատահած չլինէր, առանց, միշտ առաջ կգնանք գոյութեան կռիւ մէջ, ամուր, անյողողող և անզրդուելի մնալով յեղափոխական պատուանդանի վերայ:

Այց լինել, ախուժակս քաշել, ողբ յօրինել, երեսիականներ կարգաւ անցեալի վերայ, — այդ՝ զիտակից յեղափոխականի, որի բոլոր ուշքը, բոլոր էութիւնը գրաւուած պէտք է լինի մի միակ գաղափարով, մի միակ խոհարարով — Հայրենիքի ազատութեան գործը — այդ, ասումենք, զիտակից յեղափոխականի գործը չէ և չէ կարող լինել: Բայց նրա առաջին պարտականութիւնն է օգտուելով անցեալի դասեց՝ չկրկնել այն ինչ փնաս է առաջ բերած, դարմանել այն՝ ինչ չարիք է տուած: Ահա այդ բարձր գիտակցութեամբ, այդ անսասան համողումով զինուած և ապագայի յոյսերով վառուած, մենք միանում ենք միմեանց հետ:

Մենք միանում ենք միմեանց հետ, որովհետեւ դառն և, աււղ, շատ թանկ նստած փորձերից յետոյ համողուեցանք որ միութեան մէջն է զօրութիւնը, որ ոյժերի բաժանումից, մարմնի պառակտումից, խմբերի քայքայուելուց միայն և մի միայն չարիքն է որ ծնունդ կառնէ, որ երբ մեր թշնամին մեզ դէմ դուրս է գալիս որպէս մի բանակ, որպէս մի ամբողջութիւն, սկսած իւր շէֆից մինչև յետին հետեւակը, առանց խորութեան, առանց որևէ բացառութեան, ոչնչացնելու, բնաջինջ անելու իւր ցեղի գոյութեան դէմ սպառնացող ամեն փորձ, ամեն քայլ, անմտութիւն, յիմարութիւն, եթէ չասենք դաւաձանութիւն, կը լինէր մեր կողմից աւելի երկար կանգ սունել տառերի, բառերի անվերածելիութեան վերայ, մէկի կամ միւսի համար աւելի կամ նուազ առաւելակչիւ հանգիսացող սկզբունքների վերայ, որ հարկաւոր էր միայն զիտականօրէն քննելով այդ սկզբունքները՝ դնել նրանց իրենց տեղը և չթող տալ որ հէնց նոյն այդ սկզբունքները փոխանակ օգուտ, փոխանակ բարիք արտադրելու՝ չարիքների պատճառ դառնային:

Մենք միանում ենք, որովհետեւ այդ է պահանջում կիսաւեր դարձած, տանջուած, չարչարուած մեր սիրելի, մեր պաշտելի Հայրենիքի ազատութեան ԳՈՐԾՈՒՄ, որովհետեւ հարկաւոր է վերջապէս կտարել, փշրել այն շղթան, որ կապել կաշկանդել է նրան դարերից ի վեր:

Մենք միանում ենք, որովհետև այդ է հայ ժողովուրդի ԿԱՄԻՐԸ, այդ է նրա բաղձանքը, նրա ջերմ ցանկութիւնը, տեսնել հայ յեղափոխական ոյժերը, որոնք կոչում ունին, նրան մի՛ միայն նրան ծառայելու, նրա այլևս զգուշի զարձած ստրկութեան, զերութեան, տառապանքներին, ամեն չափ ու սահման անցած զրկանքներին, կրած անարդարութիւններին վերջ դնելու և բարձրացնելու նրան քաղաքակիրթ կոչուած ազգերի այն բարձր մակարդակին, որին մենք ձուլուած ենք, մենք ուզում ենք հասնել մեր բոլոր ոյժով, մեր բոլոր զոհողութիւններով, համախմբուած մի դրօշի տակ:

Մենք միանում ենք, որովհետև այդ են պահանջում մեր հարիւր հազարաւոր զոհերը, որովհետև վրէժ են կանչում մեր անթիւ անհամար նահատակները իրենց զերեզմաններից:

Մենք միանում ենք, որովհետև վերջապէս այդ՝ ժամանակի պահանջն է, այդ՝ տասնեակ տարիներից ի վեր սկսած ծանր, դժուար գործի յաջողութեան միակ անհրաժեշտ պայմանն է: Յեղափոխական կուսակցութիւնները մինչև այժմ գործեցին ինքնուրոյն, անջատ, անկախ միմիանցից: Ասպարէզի վերայ յաղթութեան և փառքի մրցանակը վաստակելու համար նրանք փորձեցին, թափեցին ամեն անհատական ոյժ, ամեն տեսակ ձարտարութիւն և ամեն ինչ որ պահանջումէ մրցակցութիւնը, յետ չկանգնելու համար համանպատակ մրցակցից: Այն ամենը՝ ինչ որ պէտք բարեք ակնկալում էր այդ նախանձորգ մրցակցութիւնից, ստացուեցաւ: Ամեն մի կուսակցութիւն ինքն էր վերայ կայունեցաւ, կազմակերպուեցաւ, որքան այդ կարելի եղաւ իրեն, հասունացաւ և տուաւ իւր պտուղները: Բայց նպատակը, դէպի որը ձգտում են հասնիլ կուսակցութիւնները և որ նրանց բոլորի համար մի և նոյն է, նրանց բոլորի համար ընդհանուր է, ձեռք չբերուեցաւ. նա մնաց և դեռ մնում է չիրագործուած: Կուսակցութիւններից 'չ մէկը ինքնուրոյն գործելով չկարողացաւ բանդել բռնաւորի ամուր պարիսպները, և բերզը մնումէ դեռ անառիկ: Նրանք բոլորն էլ առանձին առանձին, որքան էլ մեծ եղած լինեն նրանց իւրաքանչիւրի կողմից սկզբից մինչև այսօր պարզուած արիւթութիւնը, ձարպիկութիւնը, անձուկիրութիւնը, և իմաստութիւնը, նրանք անզօր յայտնուեցան իրագործելու այն՝ ինչ համայն հայ ժողովրդի ամենախորին, ամենաճերմ փափաքն է, այն՝ ինչ բոլոր կուսակցութիւնների միասին է— Հայ ժողովրդի ազատութիւնը տաճկական բռնապետութիւնից: Այս է ահա իրականութիւնը: Այդ են ապացուցանում մինչև այժմ դիպուած փաստերը: Մի միացած, ներքին սերտ

կապերով կապուած, համախմբուած, ներդաշնակ և համերաշխ ընդհանուր գործունէութեան անհրաժեշտութիւնը, որպէս անմիջական տրամաբանական հետեանք, բղիտւմ է այդ իրականութիւնից, այդ փաստերից, և մենք զգալով այդ ներքնապէս դիտակից և համոզուած լինելով այդ անհերքելի ճշմարտութեան, ծռուած ենք պահանջի առաջ, ծռուած ենք մեր պարտականութեան մեծութեան առաջ, խոնարհում ենք ժողովուրդի կամքին, գործի պահանջին և ժամանակի ոգուն: Մենք ձեռնարկելով այդ անհրաժեշտ միութեան գործին և յաջողուած լինելով նրանում ներքնապէս զգուած ենք որ կատարած ենք լինում մի բարձր բարոյական պարտականութիւն դէպի Ազգը, դէպի Հայրենիքը, դէպի մեր Խղէալը:

Մենք չենք ծածկում, և ինչո՞ւ ծածկել, յանչափս ուրախ ենք գործի յաջողութիւնից, ձեռք բերուած արդիւնքից և հաւատացած ենք որ մեզանից ոչ պակաս ուրախ են նաև առանց խրտրութեան այն անկեղծ հայ, յեղափոխականները, որոնց բոլորի էլ սրտերը բաբախում են միաձայն հայրենիքի ազատութեան գործին համար, բոլոր այն դժբաղդ ընկերները, որոնք կտրուած յոյս աշխարհից, ոտքերը շղթայի մէջ պիրկ կաշկանդուած, տանջուած թշնամու մութ, խոնար, զաղիր բանտերի մէջ, սպասելով անհամբեր ազատութեան աւետաբեր կոչնակին: Ուրախ է վերջապէս բոլոր հայ ժողովուրդը, այն ժողովուրդը որ մերն է, որ յեղափոխութեան է պատկանում, որ ազգային փրկութիւնը միայն և միմիայն այդ ոյժից է սպասուած: Այժմ է կայ մէկը որ չէ կարող ուրախ լինել Միութիւնից, այդ, հասկանալի է, նոյն իսկ մեր թշնամին է, այդ, Համիդը ինքն է, որի բոլոր ցանկութիւնը, բոլոր քաղաքականութիւնը, բոլոր ձիզը ուրիշ բանի չէ կարող ձգտել բայց եթէ հայ յեղափոխական մարմինների բաժան բաժան լինելուն, մեր ոյժերի պառակտուելուն ու քայքայուելուն:

Մենք ուրախ ենք նաև առաւելապէս այն բանի համար որ Միութիւնը կայացնելով բացի այն նիւթական և գործնական օգուտներից, որոնք իրաւամբ կարող ենք սպասել նրանից, ձեռք ենք բերում մի շատ աւելի կարեւոր և յեղափոխական ոգու զօրանալու տեսակէտից մի շատ աւելի մեծ բարոյական օգուտ, այդ այն է որ այդ Միութեամբ, որ առաջինը եղաւ իւր տեսակի մէջ հայկական յեղափոխութեան բոլոր ընթացքում, սկզբից մինչև այսօր, մենք ամենատեղ հարուածն ենք տալիս այն մեր մէջ արմատացած, զրեթէ անվիճելի ճշմարտութեան կարգն անցած մտքին թէ հայ տարրին յատուկ, ընդամենն լինելով զժողովրդի, անմիաբանութեան ոգին, նրանից երբէք չէ կարելի սպասել միութիւն:

Գիտենք, այդ է եղել և է հայ հակախղափոխականի կեղծաւոր առարկութիւններից, նրա սիրած, յաճախ դործածած զէնքերից մէկը յեղափոխութեան դէմ. այդ առարկութիւնը ոչնչնչացնում ենք մենք, այդ զէնքը փշրում ենք մենք մեր միութեամբ:

Մենք հաւատացած ենք որ Հնչակեան կուսակցութեան երկու հատուածների միութեամբ միացեալ կուսակցութիւնը նորից կստանայ և ձեռք կը բերէ այն զօրութիւնն ու զիրքը թշնամու դիմաց, որը յեղափոխական անդրանիկ շարժումների մէջ նա աւնքան ոյժգնութեամբ, այնքան եռանդով ու թափով երևան բերաւ:

Մենք հաւատացած ենք որ միութեան ձայնը տարածուելով ամեն այն տեղերը ուր հայութիւն կայ՝ յեղափոխական դրօշի տակ կբերէ ու կհամարիմբէ նորից այն բոլոր հիասթափուածներին, հարուածների ազդեցութեան տակ մի բուպէ ցնցուած ու ընդարմացածներին, որոնք սակայն այլ ևս սթափուած՝ չեն կարող խիղճը հանդիսաբաշուած մնալ մի կողմ և հեռուից նայել կուսին: Միացած, զօրացած, անցեալի դառն փորձերով եփուած, նոր կորովով Հնչակեան կուսակցութիւնը տառջինից աւելի մեծ զօրութեամբ առաջ կտանի շարունակուող պայքարը և կկատարէ իւր յեղափոխական պարտականութիւնը մինչև վերջը:

Բայց որպէսզի նա կարողանայ յաջողութեամբ աւարտել սկսած գործը, իրականացնել ցանկալի նպատակը, նա կարօտ է ժողովրդի աջակցութեան, նրա բարոյական և նիւթական օգնութեան, առանց որի նա մեռած մի մարմին կլինի: Հնչակեան կուսակցութիւնը իրադործելով վաղուց հետէ սպասուած, անկացուած միութիւնը, կատարեց իւր յեղափոխականի պարտականութիւնը: Այժմ մնում է որ ժողովուրդը ինքը կատարէ իւր պարտականութիւնը՝ մատակարարելով նրան այն բոլորը՝ որ հարկաւար է հայկական դատը լուծելու, բաղձալի ազատութիւնը ձեռք բերելու համար: Նրան հարկաւոր է անպայման ժողովրդի բարոյական և նիւթական երկու անհրաժեշտ ոյժերի ընձեռուումը: Մենք յոյս ունինք, մենք հաւատացած ենք որ նա կկատարէ իւր պարտականութիւնը, մենակ չի թողնի մեղպատնէշի վրայ: Նա արդէն ցոյց տուաւ բազմաթիւ դոհերով ու զոհողութիւններով որ նա կարող է էլի նոր նոր զոհողութիւններ ահնել՝ եթէ նա ուզենայ: Եւ մենք հաւատացած ենք որ նա այդ կուզենայ, որովհետեւ նա այլ ևս զիտակցութիւն ստացաւ որ յեղափոխութեան ճանապարհն է միայն որ պէտք է տանի դէպի վրկութիւն, որ մահու և կեանքի հարցը ոսւր կերպով դրուած է, որ նա միանդամ մտած այդ ճանապարհի մէջ, այլ

ևս յետ դառնալ չէ կարող, որ իրան ջարդող թըշնամուց ինչ պէսնաւ որեւէ օտար միջամտութիւնից, ոչ մի յոյս, ոչ մի հաւատք չմնաց, որ ինքը և թըշնամին այսօր միմեանց դէմ կանդնած են կուսի որպէս միակ կողմեր, որ այդ կուսից յաղթող դուրս գալու համար նա միայն և մի միայն իւր սեփական ոյժի վրայ յոյսը պէտք է դնէ: Իսկ կատարելով իւրաքանչիւրս մեր փոխադարձ պարտականութիւնները—մենք կրաշխիք կուենանք որ նպատակը կիրադործուի:

Կանդնած Միութեան բարձրութեան վերայ, լնցուած ապադայի յոյերով, Հնչակեան կուսակցութիւնը հրաւիրում է բոլոր անկեղծ յեղափոխականներին, բոլոր նրանց, որոնք միութեան զաղափարով տանջուած՝ նրա մէջ էին փնտռում փրկութիւնը, զալ միանալ նրա դրօշի տակ և միասին տանել բռնութեան դէմ բացուած Ազատութեան կուսը:

Մենք անհուն ուրախութեամբ, անհուն բերկրութեամբ, ողջունում ենք կայացած միութիւնը,

Կեցցէ Միութիւնը  
Կեցցէ Հեղափոխութիւնը:

Այլ ևս «Հին» և «Վերակազմեալ» յարանուանութեամբ ուրոյն Հնչակեան հատուածներ գոյութիւն ուենալուց դադրած լինելով՝ Վերակազմեալ Հնչակեան կեդր. վարչութիւնը անհրաժեշտ համարեց՝ հետևեալ նամակն ուղղել Հ. Յ. Դաշնակցութեան Արևմտեան Բիւրօին:

Լօնտօն 1 Ապրիլ 1902

Հ. Յ. Դաշնակցութեան  
Արևմտեան Բիւրօին  
Փընէվ

Յ Ա Ր Գ Ե Լ Ի Հ Ա Յ Բ Ե Ն Ա Կ Ի Ց Ն Ե Բ

Սերախութեամբ կ'իմացնենք Ձեզ որ Հին և Վերակազմեալ Հնչակեան երկու հատուածներուն միջև Միութեան բոլոր պայմաններուն վրայ վերջնական համաձայնութիւն գոյացած ըլլալով՝ Հնչակեան Միութիւնը կատարուած է:

Մարեղի եղածին չափ շուտ, ամբողջ կուսակցութեան բուէով, պիտի ընտրուի Միացեալ ու միակ Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութիւնը, որ պաշտօնապէս պիտի հաղորդէ Ձեզ իր կազմութիւնը և որուն հետ է որ պիտի կրնաք այլ ևս ուղղակի բանակցութեան մտնել՝ Միութեան մասին, երբ ժամանակը հասած կ'նկատէք:

Մերելի է մեզ յուսալ որ մինչև միացեալ ու միակ Հնչակեան կեդրոնին կազմութիւնը, ի վիճակի կըլլաք ուղղակի բանակցութեանց ձեռնարկելու, որով կարելի կըլլայ վճռական բայլն առնել դէպի հայ յեղափոխական ուժերու ամբողջական բաղձալի միացումը:

ընդունեցէք մեր յարգանքները:  
 Հնչակ, Կոստ. Կեղր. Վարչո Թեան կողմէն  
 Ատենադպիր Ատենապետ  
 (Ստորագրութիւն) (Ստորագրութիւն)  
 ԿՆԻՔ

**ԴԱՆԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԲԵՆՈԳՍԵՆ  
 ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ  
 ՍԵՒ ԱԳՈՒԱԻՆՆԵՐԻ ԳԵՐԸ  
 ՀԱՅՍՏԱՆՈՒՄ**

Մեր ընկերների մէկի կողմից մեզ յատկապէս ուղղը-  
 ւած նամակից քաղելով դնում ենք Հնչակի էջերում  
 ճանապարհորդ Դանիացի Բենոգոսէնի խիստ հետաքրքր-  
 ւական և այժմութիւն ունեցող ցուցմունքներն ու տե-  
 ղեկութիւնները, որոնք նա արել է մեր ընկերոջ և մի  
 հայկական ժողովում և որոնք նա անձամբ ձեռք է բե-  
 րել իւր քսան ամսուայ ճանապարհորդութեան մէջ,  
 որը նա կատարել է Քուրդիստանում, Պարսկաստանում  
 և զխաւսորպէս Թիւրքիայում, սեփական աչքերով ու  
 մասնաոր ուշադրութեամբ տեսնելով, գննելով ու դի-  
 տելով հեռքերն ու մնացորդները այն բոլորի, որ կա-  
 տարուեցաւ նմանը չտեսնուած բարբարոսութեամբ, նը-  
 մանը չտեսնուած վայրենութեամբ ու քաղանութեամբ  
 ահաբեի և անմոռանալի թուականներին և նրանցից յե-  
 տոյ սիրելի հայրինիքի ամեն կողմերում, և այն բոլոր-  
 րը, որ շարունակուած կատարուել դեռ այժմ ամեն  
 կերպով և ամենի կողմից անպաշտպան, անտէր ու ան-  
 տէրունչ մնացած հայրենի երկրի բնագաւառներում,  
 քաղաքներում ու գիւղերում: Մի տխուր, շատ տխուր  
 և սև պատկեր է ծրագրուում այդ տեղեկութիւններից  
 երևակայութեան մէջ: Հայ մարդը—այն հայը՝ որ ապ-  
 րումէ հայութեան ներկայ կեանքով, որ բայլ առ բայլ  
 հետևումէ նրա ներկայ պատմական ծանր, կրիտիկական  
 ընթացում կրած ելեկէջներին, համոզուած է և գիտէ թէ  
 տիրող հանգամանքներում նրա հէնց գոյութիւնն է  
 որ խաղի մէջ է, որ վտանգի տակ է, չէ կարող լսել  
 կամ կարգալ նրանց, առանց մտահոգ սարսուռի, ա-  
 ռանց դառն վշտի ու զայրոյթի: Բայց աւելի առաջ  
 չգնանք մեր զգացումների թելագրութեան մէջ և թող-  
 նենք որ ինքը Բենոգոսէն խօսի, որից յետոյ կանենք մեր  
 եզրակացութիւնը, որոնք ներածուած են նրա ցուցմունք-  
 ներից, արած հայկական համախմբման առաջ:

«Ես պատմեմ Ձեզ իմ քսան ամսուայ ճանապարհոր-  
 դութիւնը, որը կատարեցի Պարսկաստանում, Քիւրդիստա-  
 նում և մասնաւորապէս Թիւրքիայում, և տամ ձեզ իմ  
 տպաւորութիւնները, որոնք ես կրեցի մանաւանդ այս վեր-  
 ջինի նկատմամբ:

«Պարսից սահմանից անցնելով դէպի Ղան՝ ես ճա-  
 նապարհին հանդիպեցայ կիսաւերակ և աւերակ դար-  
 ձած հայ գիւղերի, որոնք քանդուել, կործանուել են  
 կառավարութեան ձեռքով, իսկ ժողովուրդը կոտորուել  
 90-96 թուականներին: Երկու հարիւրի չափ հայ գիւղեր  
 կիսաւերակ են դարձած: Գիւղերում մնացած են միայն  
 մի քանի կիսաւեր շէնքեր, եկեղեցիներ և այլն, կարծես  
 վկայելու համար միայն որ անցեալում այդ տեղերում  
 բնակութիւն և շունչ է եղել, և սուրբ միայն անողորմա-  
 բար բնաջինջ է արել ամեն ինչ և ամայի դարձրել

այդ գրախտանման երկիրը: Մնացած գիւղերումն էլ,  
 ինչպէս Ղանի շրջակայքում, այժմ հայերը խառն ապ-  
 րում են քրդերի հետ. իսկ կան այնպիսիները, որոնց  
 մէջ միայն մի քանի տուն է մնացել, մինչդեռ անցեա-  
 րում եղել են մի քանի տասնեակ տներ: Գիւղերը ի-  
 րար հետ ոչ մի յարաբերութիւն չունին: Կառավա-  
 րութիւնը շատ խիստ հսկումէ ճանապարհների վրայ.  
 անհնար է դարձել ապրանք տեղափոխել մի տեղից  
 միւսը: Քրդերը էլի իրանց թալանը շարունակում են  
 կառավարութեան աչքի առաջ և էլի մնում անպատիժ:  
 Բռնաբարութիւնները սովորական են: Գաղթել ու-  
 րիշ երկիր խտուրտ արգելուած է:

«Ղանը ըստ երևոյթին հանգիստ երևեց. սակայն  
 երբ խոր կերպով քննեցի դրութիւնը, տեսայ որ ու-  
 տիկանական խիստ հսկողութիւն կայ հայերի վրայ և  
 համարեա ամեն օր խուզարկութիւններ են կատարուում  
 և բանտերը անմեղ զոհերով լեցուում: Բողոքել անկա-  
 ընելի է, նախ որ լսող չկայ և երկրորդ որ բողոքողին  
 իսկոյն և եթ ձերբակալում են և առաջնորդում բանտ,  
 որտեղից ազատուելու ոչ մի հնար չկայ: Անտէրի և գոյքի  
 կատարեալ անապահովութիւն է տիրում. հայը հազել  
 է կարողացել կոտորածներից յետոյ իրան դրստել և  
 օրուայ հացը աշխատել, և սակայն ահագին դժուա-  
 րութիւններ ու խոչընդոտներ շարուում են նրա առաջ:  
 Պակաս դեր չեն կատարում նաև կաթողիկէներն ու բո-  
 ղոքականները, որոնք օգտուելով հայի անօթութիւնից՝  
 մի քանի ոսկի տալով անհաւատութիւնից նրանց  
 դարձնում են կաթողիկէութեան կամ բողո-  
 քականութեան: Մի խօսքով սոսկում է մարդ, երբ  
 տեսնում է որ իրա հետ կրօնի անունով ամենազղուելի  
 և ամենաանաւօթ շահագործութիւն է կատարուում, և  
 հէնց դրա շնորհիւ էլ ժողովուրդին անուղղակի կերպով  
 հեռացնում աստուածաշտութիւնից:

«Այդ տեղից անցնելով Տիգրանակերտ, Արաբկեր,  
 Խարբերդ, միւսնոյն տեսարանը պատկերացած գտայ  
 իմ առաջ. ամեն տեղ բարուբանդ գիւղեր, ամայա-  
 ցած շէնքեր և ոչնչացած ամեն լաւ բան: Սակայն  
 այստեղ մի շատ տխուր բան աւելի գտայ. երկու հա-  
 րիւր հայ լուսաւորչական գիւղեր մահմետականութիւն  
 են ընդունել կոտորածներից յետոյ, և այժմ հայոց  
 եկեղեցիները մզկիթների փոխուած՝ քահանաների տեղ  
 մուլաներն են երգում նրանց մէջ: Չնայելով այն բա-  
 նին որ Գեսայանները իրաւունք են ձեռք բերել կրօ-  
 նափոխ եղած հայերի համար կրկին յետ դառնալու  
 իրենց նախկին կրօնին, սակայն այդ այնքան դժուար  
 բան է որ անկարելիութեան է հասնում, որովհետև  
 կառավարութեան կողմից նշանակուած մուլաներից ամեն  
 մէկը պաշտօնական լրտես է և նրանք այդպիսի մի բայլ  
 անողին իսկոյն և եթ յայտնում են կառավարութեան  
 և նրան մի որևէ պատճառով դատի ենթարկում կամ  
 բանտ նստացնում: Հէնց այդ պատճառով էլ՝ հայերը  
 տեսնելով որ Եւրոպացիները խօսքից այն կողմը չեն  
 անցնում, որ գործնականի մէջ ոչինչ չեն անում, աւելի  
 լաւ են համարում աշխարհում ապրել որպէս կենդա-  
 նի մարդ քան թէ մեռնիլ որպէս հայ հաղար ու մի  
 տանջանքների տակ, ծաղր ու ծանակ լինիլ Եւրոպայի  
 առաջ և նրանց մեծագոյրդ միտինդներին խօսելու նիւթ  
 մատակարարել միայն: Սակայն այս բոլորից յետոյ եթէ  
 որևէ կերպով հնաբաւորութիւն գտնէին՝ էլի կգառ-  
 նային լուսաւորչական, բայց այդ դժուար է, որովհետև

բողոքովին անպաշտպան են: Այդ տեղերում սաստիկ չքաւորութիւն է տիրում և այդ դրութեան մէջ էլ բրդերի և պաշտօնեաների թալանին են ենթարկուում հայերը:

«Այդտեղից անցայ Մուշ: Այդտեղ դուք ամեն մի քայլափոխում կհանդիպէք համիդականների, որոնք արձակ չընում են և թալանում հայ գիւղերը՝ մնալով անպատիժ: Քայց նկատեմ որ եթէ նա հայի մօտ ոչ չինչ չէ գտնում թալանելու՝ նաև թալանում է թուրք գիւղերը: Մի բանի հայ գիւղեր լաւ են, ուտելու հաց ունին, բայց շատ տեղերում սովածութիւն է: Մուշը շատ աղքատ դրութեան մէջ է. մանուկները, երեխաները դուրսը փողոցում են թափուած, որպէս շներ, մերկ անօթի, անտուն, անտիրական: Ղեզու պէտք է որ նրկարագրէ այդ որբերի դրութիւնը. խօսքը անզօր է, պէտք է տեսնել և զգալ: Այդ անմեղներին ծեծում են ամեն քայլափոխում. շատերին բռնի մահատականացընում են: Պատահել են նոյն իսկ բռնաբարութիւններ: Այս միայն մի որբանոց, որ պահում է 25 որբ, որից աւելի պահելու համար չունի նա դրամական ոյժ: Մուշի ժողովրդից երկու հազար հինգ հարիւր հոգի ստորագրութեամբ դիմել են Ռուսաց կօնսուլին և խնդրել են որ իրանց համար ուղարկեն մի ուսուցիչ նախ՝ յունարաւանութիւն ընդունելու և ուսուցապատակ դրուելու: Այդ ստորագրութիւնը ուղարկուած է Միւնիստրութեան, որ ընդունել է նրան և հրամայել Թիֆլիզի էկզարխին, որպէսզի բահանայ ուղարկէ Մուշ այդ հայերին յունարաւան դարձնելու համար: Այս լուրը կայծակի տրագուծեամբ տարածուել է ներքին նահանգները և մեծ շարժում առաջ բերել դէպի Ռուսը: Իսկ տաճիկ կառավարութիւնը շատ մեծ արգելքներ է յարուցանում այդ շարժման դէմ: Ռուս ապէստներ լիքն են երկրում, որոնք մտքեր են պղղատրում. կաշառքը մեծ գեր է խաղում այդ գործում:

«Երկրից հայերը ուղում են գաղթել Ռուսաստան, բայց չեն կարողանում, որովհետև գաղթելու և ընդ միշտ այնտեղ մնալու համար հարկաւոր է թողտրուութիւն ստանալ Ռուսաց կօնսուլից, որը սա չէ տալիս. միւս կողմից՝ թուրքն էլ չէ համաձայնում վերադառնալու պայմանով անցագիր տալ, այնպէս որ հայը մնում է իրա տեղը և ընդ միշտ դատապարտուում տանջանքների:»

Ի՛նչնըգսէնի տուած վկայութիւնները երեք կարևոր հասարակական վերքեր են երևան բերում, որոնցով տառապումէ այսօր հայի հայրենիքը: Այդ վերքերը անշուշտ նոր բացուած չեն նրա հիւանդ և նիհար մարմնի վրայ. նա նրանցով միշտ տառապել է, միշտ տանջուել է, սակայն նրանից յետոյ երբ թշնամին յաջողեցաւ հասցնել զարմանալի խորամանկութեամբ, վայրենիին յատուկ անսովթ խորհուրտութեամբ ու գազանութեամբ այն ծանր, սոսկալի հարուածը, որի արգասիքը մինչ օրս կրում է, չնայելով ահա արդէն 7 տարիներ անցած են նրանից յետոյ, այդ վերքերը աւելի էլ բացուեցան, մեծացան և այլ ևս վտանգաւոր ու երկիւղալի են դարձած նրա տկարացած օրբանիզմին: Այդ թանկագին տեղեկութիւններից երևումէ որ Հայրենիքը տանջուում է այսօր աւելի բան երբէք տընտեսապէս, որ չնայելով այն բանին որ 95-97 թրւականների անիշխանական կողպուտներից, թալաններից ու աւարառութիւնից յետոյ հայ ժողովուրդը Հայաստանի գաւառներում մերկացաւ իւր բոլոր գոյքերից ու կայ-

քերից, բոլոր հարատուութիւնից, չնայելով այն բանին որ ահ ու սարսափի երեսից, կառավարութեան չափ ու սահման անցած կասկածոտութիւնից թէ ներքին և թէ արտաքին վաճառականական ամեն յարաբերութիւն դադարած լինելով՝ կեանքը, օրսպահիկը վաստակելը գրեթէ բոլորովին անհնար է դարձել, չնայելով այդ բոլորին՝ բրդերը, այդ անգիտակից, վայրենի և անիշխան հօրդաները դարձեալ փորձում են այդ սեփականազուրկ մուրացկանից մի բան պոկել, մի բան գջլել տանիլ: Եւ հասած այդպիսի ողորմելի կացութեան՝ դեռ հարկաւոր է որ հարկերը վճարուին, տուրքերը տրուին, կաշառքները կերցուին...:

Հայրենիքը տառապումէ այսօր, ինչպէս միշտ, բազաբականապէս: Հարիւր հաղարներին կոտորելուց յետոյ, երկրի ելք ու մուտքը պինդ փակելուց, գոները ամուր կողպելուց յետոյ, երբ արտաքին միջամտութեան ամեն երկիւղ այլ ևս վերացած է, թշնամին ամեն ժամանակից աւելի ուժգնութեամբ, ամեն ժամանակից աւելի անսովթ, սանձարձակ ժպրհութեամբ դրել է իւր բըռուպիտական տիրող ցեղի ծանր, անհանգուժելի կամքը, արդարութիւն, օրէնք, իրաւունք վերացած են և ամբողջ մի ցեղ, ամբողջ մի ազգ գտնուումէ á Ja merci մի իրանից աւելի ուժեղ և բարբարոս ցեղի...:

Իայց այն վերքը, որ, թուումէ մեղ, այդ երկուսից աւելի է տառապեցնում հայ անպաշտպան ժողովուրդին, այդ՝ բարոյական վերքն է, որը խառնուածն, խոցումեն, գրգռում ու թարախոտում են ոչ միայն անմիջական թշնամին ինքը, այլ նրա հետ հաւասարապէս բոլոր այն տարրերը, որոնք նման գիշակեր ագուաւների, շրջապատած են այսօր սոված, ձնչուած, ցաւատանջ հայիական մարմինը: Օ՛, այդ զղուելի է, զըղուելի: Զղուելի է և անտանելի տեսնել այդ կաթօրիկ, բողոքական, յունարաւան և այլ ամեն յարանուան տակ բրիտանեայ պատերաններին, Փրէքներին, միսիօնարներին պօպերին, որոնք ագահութեամբ, նախանձոտ մրցակցութեամբ վազում են յանուն մարդասիրութեան օգնելու ընկած և սոված մի ժողովուրդի, բայց պահանջելով որ նա փոխէ իւր կրօնը, նա հաւատի դառնայ, նա Տիրոջը ուղիղ ճանապարհը մտնէ: Ա՛հ դուք կեղծաւորներ դուք երեսպաշտներ, դուք ծածկուած գայլեր, դուք պղտոր ջրերում որսացողներ, դուք բարեկամութեան անուան տակ աւելի մեծ չարիք էք հասցնում մեր ցեղին, մեր ազգին, մեր արիւնին բան մեր թշնամին ինքը, որ ոչ մի կեղծաւորութիւն, ոչ մի ծածկամտութիւն, ոչ մի թաքուն նպատակ չունի մեր նկատմամբ, նա մեր բաց, մեր համարձակ, յայտնի թշնամին է, նա մեր գայլն է, որին մենք ճանաչում ենք իւր մորթից, իսկ ձեզ ինչպէս ճանաչել: Գուք, ջեզուիտ լոյօլայի որդիքը, դուք մեզանից տարիք հազարաւոր ընտանիքներ, անջատեցիք ազգային ամբողջութիւնից ահագին մի թիւ, որ հայկական գոյութեան ճգնաժամում զլացաւ իւր ամենաթեթեւ աջակցութիւնն իսկ, այն նուիրական, սրբազան կրուում որ մեր միակ յոյսը, մեր միակ տպաւէնն է և այսօր փրկութեան ու կեանքի: Եւ դուք միացած ձեր մըրցակիցներին, բուրժուա և մաքրակրօն միսիօնարներին, այլ և սրանց արբանեակը, սրանց պոչը՝ կազմող անմիտ հայ պատուելիներին ու ոչխարամիտ, փանատիկոս պօպերին՝ աւելի մեծ եռանդով շարունակում էք և այսօր, երբ պայմանները ամեն ժամանակից աւելի նպաստաւոր են որսալու, հնձելու, բաղելու, դուք շարունակումէք ձեր բայբայիչ, ցտիչ, անջատող և կազմա-

լուծող դերը մի ազգի նկատմամբ, որին ամեն ժամանակից աւելի հարկաւոր է ունենալ, անձեռնմխելի պահել իւր ամբողջութիւնը, իւր միութիւնը շարունակող յաւաստ պայքարին մէջ: Բայց, սպասեցէք, այդ տխուր ասպարէզի վրայ դուք, քաղաքակրթութեան վիժածները, երկար առաջ չէք գնայ, այդ ստոր, ամենակեղտոտ խղճի վաճառականութիւնը երկար չէք գործադրի: Ամենից անտէր ու անպաշտպան մնացած հայ ժողովուրդը, որ դարերից ի վեր գիմագրել է և գիտէ գիմագրել գեռ ևս կեանքի պատուհասներին, հարուածներին, հետզհետէ սթափում է և գտնում իրեն, ինչպէս այդ ցոյց են տալիս ժամանակի նշանները, նոյն Բենըգսէնի ցուցմունքները և ամեն կողմերից ստացուած նորաբոյն թարմ լուրերը: Նրա հետ սթափում է և հետըզհետէ աւելի ու աւելի զօրանում է յեղափոխական ոյժը, և այդ երկուքը միացած, ձեռք ձեռքի տուած՝ կիջրեն թշնամու գերութեան պինդ շղթան, որով նա կապել կաշիանդել է հայութեան, և կազատեն հայկական օրգանիզմը ամեն տեսակ քաղաքական ու բարոյական գիշատողներից—ահա և այդ ժամանակ ու այդ պայմանով կըարմանուին ու կիսկուրեն նրա վերայ բացուած և նրան մաշող սւ տանջող այդ երեք խոշոր վերբերը:

Հ: Խ

**Մ Ի Ի Ն Ս Ի Ն Ո Ի Ա Ց Ի Ա Յ Ի Ա Ռ Թ Ի Ի**

Այս օրեր պատահմամբ մեր ձեռքն ընկաւ Պարիզի հայկական տպարանից լոյս տեսած և 12 երեսից բաղկացած մի փոքրիկ բրօշուր, որ կրում է «Հասարակաց Գատաստանին» տիտղոսը և որ մի բողոք է ուղղուած առ «Հասարակական խղճմտանքն»: Ասում ենք պատահմամբ, որովհետև հեղինակը, ոմն Հ. Առաքելեան, չենք իմանում թէ ինչու չէ ուղած գոնէ մի օրինակ ուղարկել ուղղակի մեր հասցէին, երբ իմանում էր որ նրանում շօշափուած խղճիւնները, իրա խօսքերով, մեզ աւելի քան ուրիշին կարող էին շահագրգռել: Այդ հանգամանքը և այլ իրողութիւններ ու հակասութիւններ, ինչպէս այն որ պարտնը շատ ուշ է գալիս զբաղուելու մի խնդրով, որ վաղուց մոռացութեան էր արուած, այն՝ որ նա մէկ կողմից հրաւեր է կարգում կուսակցութեան, պատժել իւր մեղադրեալին, պ. Ա. Նազարբէգեանին, բայց միւս կողմից այդ կուսակցութեան գոյութիւնն իսկ կասկածանքի է ենթարկում, այն՝ որ նա նախքան հրատարակութեան տալը պ. Ա. Նազարբէգեանի կողմից իբր իւրացրած կուսակցութեան պատկանող ինչ որ 4000 ոսկու մի գումար, մի բողոք ներկայութիւն չէ յանձն առած գիմելու կուսակցութեան՝ ստուգելու այդ իրողութիւնը և այլն և այլն, այս բոլորը, ասում ենք, մեզ տեղիք են տալիս կասկածելու պարտնի անկեղծութեան վերաբերմամբ և ակամայ հասցնում են այն ելքակացութեան որ նա իսկապէս պ. Ա. Նազարբէգեանի անձնաւորութիւնը չէ որ ուզեցել է հարուածել, այլ նրա վերայով նոյն իսկ իրան, Հնչակեան կուսակցութեան, որին նա ձգտում է վարկաբեկ անել հասարակութեան առաջ: Ուրիշ կերպ էլ անկարելի է մտածել այդ պարտնի տարածում յայտնուելու նկատմամբ:

Յայտնում ենք որ կուսակցութիւնս արհամար-

հանք միայն կարող է ունենալ պարտնի և իրա նշմանները համար, որոնք իրանց չարամիտ դիտարկութիւններով և կեղտոտ ինսինուացիաներով երբէք չեն կարող դիպել կուսակցութեանս պատուին, որ կմնայ անաղարտ՝ ինչպէս եղել է միշտ:

Եւ որպէսզի թոյլ չտանք որ այդ ծածկամիտները օգտուելով ուրիշների ասէկոսէներից՝ մոլորեցնեն հասարակական կարծիքը՝ շտապենք ասել մի անգամ ընդ միշտ և այլ ևս չվերադառնալու համար մի խնդրի, որի համար ոչ ժամանակ ունինք և ոչ տրամադրութիւն, այն՝ ինչ անհրաժեշտ ենք համարում կուսակցութեանս բարոյական վարկի և հայկական յեղափոխութեան շահերի տեսակէտից:

Պ. Հ. Առաքելեան յայտնի համարձակ, առանց այլ և այլի՝ առանց որևէ կասկածի նշոյն իսկ ցոյց տալու, ամբաստանում է իւր բրօշուրով պ. Աւետիս Նազարբէգեանին, այն անձին՝ որ եզել է Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից մին և որ գտնուել է կեդրոնական վարչութեան մէջ որպէս անգամ շարունակ եօթ տարի, այն բանի մէջ որ նա իւրացրել և կլանել է կուսակցութեան պատկանող և Ձէյթունի ապրտամբական շարժման նպաստելու համար հայ ժողովրդից նուիրուած 4000 ոսկու մի գումար:

Ետպում ենք յայտնել ի գիտութիւն հայ հասարակութեան որ պ. Հ. Առաքելեանի առաջ նետած այդ իրողութիւնը ճիշդ չէ, որ կուսակցութեանս պատգամաւորական ժողովը քննելով այն կեդրոնական վարչութեան հաշիւները, որի մէջ պաշտօնավարել է պ. Ա. Նազարբէգեան, չհաստատեց այդպիսի իրողութիւն, և հետևաբար պ. Հ. Առաքելեանի կանխած ամբաստանութիւնը պէտք համարել պարզապէս մի զուարտութիւն:

Ինչ վերաբերում է բրօշուրի երկրորդ կէտին, որով պ. Հ. Առաքելեան բարձրացնում է վարագործը մի մասնաւոր, ընտանեկան կեանքի և ձգնում թափանցել տալ հասարակութեանը նրա գուցէ անթափանցելի խորշերի մէջ՝ յայտնում ենք որ պ. Աւետիս Նազարբէգեան արդէն 98 թուականից սկսած, որից յետոյ պատահել են բրօշուրում յիշատակուած դէպքերը, բոլորովին բաշուած լինելով կուսակցութեանս գործերից՝ կուսակցութիւնս ամենեւին պատասխանատու չէ կարող լինել նրա վարած մասնաւոր, ընտանեկան կեանքին:

**Պ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն Ը Բ Ա Լ Կ Ա Ն Ն Ե ր Ո Ի Մ Մ Ա Կ Ե Պ Ո Ն Ա Կ Ա Ն Հ Ե ր Ց Ի ր**

Կոիւր ազատութեան ձգտող ազգերի և տաճիկ բռնապետութեան մէջ շարունակուած անդադար:

Վերջին յուրերին նայելով՝ դրութիւնը Մակեդոնիայում և առ հասարակ Բալկաններում գնալով ծանրանում է: Մակեդոնական հարցը հետզհետէ աւելի ու աւելի սուր կերպարանք է ստանում և Եւրոպական խաղաղութեան լուրջ սպառնալիք գառնում: Կազմուած են Մակեդոնական յեղափոխական խմբեր, որոնք սահմանն անցնելով՝ ընդհարումներ են ունենում տաճիկական զօրքերի հետ: Պնդում են, առաւելապէս Գերմանական բաղադրական շրջաններում որ բուլղարական կառավարութիւնը պաշտպան է կանգնում Մակեդոնական շարժման և հրահրում նրան. այդ պատճա-

ուով էլ տաճիկ և բաւղար կառավարութիւնները մէջ յարաբերութիւնները գնալով աւելի ու աւելի բարձրանում են:

Ամենավերջին լուրերը, որը բաղում ենք Եւրոպական թերթերից, ցոյց են տալիս որ դրութիւնը աւելի բան սպանական է Բալկանեան թերակղզու վերայ:

—Ռէյտերեան գործակալութիւնը հեռագրում է Պոլսից Ստանբուլի Ապրիլի 7 եց. Արքիանուպոլսի Ալիին հեռագրում է որ չորս բուլղարներից բաղկացած մի խումբ սպանել և անդամատել է երեք մահացած և փրկուած փրկուածները և մի երեսայ մեծ ճանապարհի վերայ, սահմանագլխից երկու ժամուայ հեռավորութեան վերայ, Բըրբը—Բիլիսէ ասուած տեղի մտ, և ապաստանել է բուլղարիայում: Հաստատուէմ որ այդ սպանութեանց և նախատինքի շարժառիթը պարզապես փոխադարձ վերաբերութիւն գրգռելն է եղել:

—Վէյլի Մէյլի թղթակիցը գրում է Չեխիներէց.

Շանր կախ տեղի է ունեցել Նովի Բազարի ասնջաբում քրիստոնեաների և Մուսա Զէկա-ի վրէժխընդիրների միջև: Յեղափոխութիւնը տարածուած է:

—Ստանբուլի Աթէնքի սեփական թղթակիցը.

Նայելով Ստորին Ալբանիայից ստացուած նամակներին՝ Թիւրքիայի պահեստի զորքերի զէնքի տակ կանչելը Մակեդոնիայում զինուորական ուժը մեծացնելու համար, յուզում է առաջ բերել Ալբանիայի պահեստի զորքերի մէջ, որոնք ստիպուած են թողնել իրենց տուն ու տեղը հակառակ իրենց կամքի. շատ գաւառներ, ինչպէս Գեւլինոյի գաւառը, լեցուել են փախըտական զինուորներով, որոնք խիստ նեղում են և կեղտըում բնակիչներին: Ասուած որ քրիստոնեաները դիմում են տաճկական իշխանութեանց՝ պաշտպանութիւն գտնելու համար, բայց իզուր:

Թիւրքիայի հորիզոնի այդ կէտի վերայ կուտակուած են թանձր, մթադոյն ամպեր, որոնցից, ուշ կամ կանուխ, դուրս պիտի պուռթկայ Թիւրքիայի գլխին ուժեղ փոթորիկ: Հարցնում ենք, ինչ են մտածում անել այն միւս ազգերը, որոնք նոյնպէս նպատակ ունին թոթուել Օսմանցի բռնապետական լուծը, այն օրը, երբ այդ փոթորիկը կպայթի...:

Հնչակի Ուր 4 և Ուր 5 համարներում «Բուրգազի Սողունները» վերնագրի տակ երևան բերուեցան այն մատուցութիւնները, որոնք գործ դրուեցան մի բանի սեւահոգի անձերի կողմից: Այդ մատուցութիւնները հասաստող բոլոր զօկուակները գտնուածն մեր ձեռքի տակ, սակայն ժամանակ չունենալով այժմս զբաղուել այդ խնդրով՝ նրանց հրատարակումը թողնուածնք ուրիշ անդամի, երբ հարկաւոր համարուի:

Վուսակցութեանս գանձարանում շնորհակալութեամբ ստացուել են հետևեալ նուիրատուութիւնները.—

ԲԱՆԻՌԻԻ Հնչ. Մասնաճիւղից՝ 50 անգլ. ոսկի. ըստացուած հետևեալ կերպով. 15 ոսկի՝ մէկ անգամ, 10 ոսկի՝ մէկ անգամ, ուղղակի Մասնաճիւղից. 5 ոսկի՝ նոյն Մասնաճիւղի պատգամաւորներ՝ Պ. և Հ. ի միջոցաւ: Մի և նոյն Մասնաճիւղից նաև վերջին անգամ՝ 20 անգլ. ոսկի:

ՆԱԼԱՀԱՆԳՍԻ Հնչ. Մասնաճիւղից՝ 7 անգլ. ոսկի, 8 շիլինգ և 2 պէնս, նուիրուած հետևեալ անձերից. Խորէն խմբից՝ Սուրէն 1 բուրջի, Եփրատ 1 բ., Զանփոլատ 1 բ., Բաբկէն 1 բ.,

Արէժ 50 կոպ., Գուրգէն 60 կ., Արիւծ 50 կ., Տրդատ 50 կ.: Կայծակ խմբից՝ Ծաղիկ 1 բ., Յոբ 40 կ., Անհամբեր 20 կ., Սանդր 20 կ., Աշտ 20 կ., Այազ 50 կ., Բուրգար 20 կ., Արտաշ 20 կ., Հրաչեայ 1 բ., Արտաւազդ 20 կ., Խորէն 50 կ., Ահապան 40 կ., Իկլեզ 1 բ., Արամ 30 կ., Շամբը 30 կ., Մկուզ 50 կ., Ֆարբը 40 կ., Պողպատ 25 կ., Չալիկ 40 կ., Անդակ 30 կ., Վրաակ 20 կ., Կոճ 20 կ., Արիւծ 20 կ., Սալտարէ 15 կ., Վարշաղ 0 կ., Մովսէս 20 կ., Մատանի 10 կ., Զըրբիլը 20 կ.: Կրակ խմբից՝ Արաբ 50 կ., Վրէժները 1 բ., Արամայիս 1 բ., Ատաշ 50 կ., Մուրճ 50 կ., Ծաղիկ 20 կ., Զանփոլատ 20 կ., Խուրդ օղի 20 կ., Առաջապուհ 20 կ., Ետիբալա 50 կ., Համազասպ 20 կ., Խանաւտալ 20 կ., Խուրշուտ 20 կ., Հայրուկ 50 կ., Գայլ Ահապան 30 կ.: Վրիժառու խմբից՝ Աշտ 40 կ., Կրակ 50 կ., Կայտակ 1 բ., Գայլ 50 կ., Տրդատ 40 կ., Միհրդատ 1 բ., Վիշապ 50 կ., Չիչակօի 1 բ., Աղբիւր 50 կ., Եղնիկ I բ., Նապաստակ 60 կ., Ճնճուկ 1 բ., Չալիկ 1 բ., Շամփուր 60 կ., Մասիս 50 կ., Ֆիլ 1 բ., Փուշ 1 բ., Չարուչ 1 բ., Աշլան 50 կ., Բար 20 կ., Պապուկ 00 կ., Արճիճ 60 կ., Չուկ 50 կ., Գալիզաղ 20 կ., Անուակ 1 բ., Հըրահան 50 կ., Զըհեր 50 կ., Աղաճ 40 կ., Աբաղաղ 50 կ.: Հարաւային խմբից՝ Վէժ 50 կ., Սէր 50 կ., Արծիւ 50 կ., Չալիկ 50 կ., Մաբրիլ 40 կ., Թալան 40 կ., Սարի չէպէկ 40 կ., Մասիս 40 կ., Միութիւն 1 բ., Խապլան 20 կ., Վարդ 40 կ., Արբայ 50 կ., Ասող 40 կ., Կաբաւ 30 կ., Աղէկ 50 կ., Ահաբեր 40 կ., Փառախոտ 40 կ., Վարդերես 60 կ., Սիս 50 կ., Անթառամ 60 կ., Խան 40 կ., Գասպար 50 կ., Յոբ 40 կ., Արիւծ խմբից՝ Ծաղիկ 70 կ., Իվէթ 50 կ., Աղապաղ 50 կ., Երկաթ 50 կ., Խորշուտ 50 կ., Ճոբ 50 կ., Աղուէս 40 կ., Զըրկալ 60 կ., Թաթուլ 50 կ., Պարտիզպան 50 կ., Ընձառիւծ 50 կ., Որբ 50 կ., Մինակ 50 կ., Գալիան 50 կ., Զէյպէկ 50 կ., Կեալուռ 60., Երիտասարդաց խմբից՝ նուէր 4 բ.: 6 բուրջի էլ գանձարանից:

ՆԻՒԵՕԻՔԻ Հնչ. Մասնաճիւղից՝ 14 անգլ. ոսկի, գոյացած Ս. Ե. ի կուսակցութեան նուիրած մի նկարի վրէժակահասնութիւնից:

ԱՄԵՐԻԿԱՅԻՑ՝ 34 անգլ. ոսկի, ստացուած հետևեալ կերպով.

ԼԻՆԻ Հնչ. Մասնաճիւղի միջոցաւ՝ 30 անգլ. ոսկի Յ. Տ. Ա. ից 1 անգլ. ոսկի և 10 շիլինգ. Գ. ից, Կ. ից Ա. ից, Բ. ից, և Ռ. ից 10-ական շիլինգ:

ԼՕԻԵՆՍ Բաղարից՝ Ա. Ռ. ից և Պ. Տ. ից՝ 3 անգլ. ոսկի:

ԼՕՆՏՕՆԻ Հնչ. Մասնաճիւղից՝ 1 անգլ. ոսկի:

ԲԻՕՍԹԵՆԶԷՑԻ Հնչ. Մասնաճիւղից՝ 50 Փրանկ, 50 բան:

ՍՈՒԼԻՆԱՅԻ Հնչ. Մասնաճիւղից՝ 75 Փրանկ:

ԲՈՒՐԳԱԶԻ Հնչ. Մասնաճիւղից՝ 50 Փնանկ:

Հետևեալ անձերից՝ Ռ. Զ. ից՝ 15 շիլինգ. Հ. ից՝ 10 շիլինգ, Յ. Բ. ից և Ն. Փ. ից՝ 5-ական շիլինգ:

Յօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանգատ ուղարկել հետևեալ հասցեով

M. Lambert.—85, Peckham Rye London S. E. (Angleterre).

ՏՊԱՐԱՆ «Հնչակ»-ի ԼՕՆԴՕՆ.